ՄԱՐԴԱԿԵՐՊԱԿԱՆ ՓՈԽԱԲԵՐԱՑՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲՈՒՍԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ ԱՐՑԱԽԻ ԲԱՐԲԱՌԻ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆԻ)

DOI: 10.54503/978-9939-970-23-3-266

Սանթրյան Լիանա
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Հայաստանի ազգային ագրարային համալսարան, դասախոս.
santryan83@mail.ru
ORCID:0009-0000-2899-8368
Թովմասյան Լուսինե
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Հայ-ռուսական համալսարան, դասախոս.
tovmasyanlusine@list.ru
ORCID:0009-0000-6082-4958

Բանալի բառեր. բուսանուն, փոխաբերություն, մարդաբանական փոխաբերություն, համեմատական ուսումնասիրություն, փոխաբերացված բուսանուն, իմաստային դաշտ, լեզվամշակույթ։

Նախաբան

Աշխարհում այսօր ընթացող փոփոխությունների և ձևավորվող նոր աշխարհակարգի ու նոր դաշնակցությունների համատեքստում արդիականություն են ստանում լեզվամշակութային ուսումնասիրությունները, որոնք օգնում են ավելի լավ հասկանալու ազգերի հոգեկերտվածքը և նպաստում ազգամիջյան երկխոսությանը։ Աշխարհի լեզվական պատկերի ստեղծման գործում ժողովրդի կենցաղի հայե-

լին է նրա բառագործածությունը, որում իր ուրույն տեղն ունի բուսանունների փոխաբերացումը՝ որպես հազարամյա կենսագործունեության անքակտելի մաս։

Աշխարհի լեզվական պատկերը լեզվի մեջ արտացոլված և լեզվի միջոցով արտահայտված շրջապատող իրականության կառուցվածքի մասին համակարգված պատկերացումն է։ Այլ կերպ՝ աշխարհի լեզվական պատկերը համակարգ է, որում ամրագրված են գիտակցության աշխատանքի արդյունքները[1]։

Աստվածաշնչում ասվում է, որ երրորդ օրն Աստված ստեղծեց ցամաքը, ծովերը և բուսականությունը՝ կանաչը, խոտերը և ծառերը, որոնք պտուղ են տալիս[2]։ Այս կերպ, բուսականությունն ի հայտ է եկել ավելի վաղ, քան կենդանիներն ու մարդիկ։ Մոլորակի վրա կյանքի հիմքը լինելով՝ բուսականությունը ոչ միայն ստեղծում է բնության անկրկնելի գեղեցկություն, այլև բազմագործառույթ է՝ թթվածնի և սննդի աղբյուր է մարդկանց և կենդանիների համար, ծառայում է որպես շինանյութ, կտորեղենի, դեղերի աղբյուր և այլն, այդ պատճառով բուսանունները ամրագրվել են լեզվի մեջ որպես մշակութային և խորհրդանշական իմաստների կրողներ։

Յու.Ապրեսյանը նշում է. «Լեզվին բնորոշ՝ իրականության հայեցակարգման միջոցը (աշխարհայացք) մասամբ համընդհանուր է, մասամբ ազգային-յուրահատուկ, այնպես որ տարբեր լեզուների

---

[1] **Дин Лин**, *Фитонимы-названия древесных растений в русских и китайских фразеологизмах с религиозным компонентом (лингвокультурологический аспект)*. - Мир науки. социология, филология, культурология, том 14, N:4 , 2023, skf_mn.ru/PDF/18FLSK423.pdf (ներբեռնման օր՝ 10.02.2026)։

[2] *Աստուածաշունչ*, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, 1994, Գիրք Ծննդոց 1։ qahana.am/bible/OldTestament/Genesis.html (ներբեռնման օր՝ 10.06.2026)։

կրողները կարող են աշխարհը տեսնել տարբեր կերպ՝ իրենց լեզուների պրիզմայով»[3]:

Բուսանունների փոխաբերացման հիմքերը

Աշխարհագրական տարածքն առանցքային դեր է խաղում բուսանունների փոխաբերացման գործում: Ինչպես նկատում է Ա.Ղանալանյանը. «Հայ ժողովրդական առածների ու ասացվածքների մեջ խոսք չկա, դիցուք, արմավենու, ձիթենու, նարնջենու, կիտրոնի և արևադարձային ու բևեռային ուրիշ բույսերի, ծառերի և սրանց պտուղների, ծաղիկների, խոտերի մասին, մինչդեռ բազմիցս հիշատակվում են ծիրանի ծառն ու ծիրանը, նշենին ու նուշը, խաղողը, բարդին, ուռենին, վարդը, ռեհանը, կակաչը, դաղձը, ցորենը, գարին, գխտորը, որոնք, ինչպես հայտնի է, շատ տարածված են Հայաստանի պայմաններում»[4]:

Պատմական զարգացման ընթացքում այս կամ այն բույսին վերագրվում են իմաստային տարբեր շերտեր՝ պայմանավորված տվյալ ժողովրդի հոգեբանությամբ, կենսակերպով, սովորույթներով, աշխարհագրությամբ, տվյալ տարածքին հատուկ բուսատեսակներով և նրանց կիրառական առանձնահատկություններով, ինչն էլ բուսանունների փոխաբերացման հիմք է դառնում:

Փոխաբերության առաջին սահմանումը դեռևս Արիստոտելն է տվել. «Փոխաբերությունը փոփոխված իմաստով բառի փոխանցումն

---

[3] **Богус З.**, **Ягумова Н.**, *Метафоризация наименований флоры и фауны в разносистемных языках*. - Вестник АГУ, Выпуск 4 (227), 2018: cyberleninka.ru/article/n/metaforizatsiya-flory-i-fauny-v-raznosistemnyh-yazykah/viewer (Ներբեռնման օր՝ 12.02.2026):

[4] **Ղանալանյան Ա.**, *Հայկական առածանի*, Ե., 1951:

է կարգից տեսակին կամ տեսակից կարգին, կամ տեսակից տեսակին կամ ըստ համաբանության»[5]:

Ըստ Կ. Մակկորմակի՝ փոխաբերություններն արտացոլում են ճանաչողական գործընթացները, որոնց միջոցով մենք խորացնում ենք աշխարհի մասին մեր պատկերացումները և ստեղծում նոր վարկածներ: Նոր փոխաբերությունները փոխում են առօրյա լեզուն, որը մենք գործածում ենք, և միաժամանակ փոխում են մեր աշխարհընկալումն ու աշխարհաճանաչումը:

Ըստ Ջ. Լակոֆի և Մ. Ջոնսոնի՝ փոխաբերությունը հայեցակարգային է, քանի որ այն գոյություն ունի միաժամանակ երկու հայեցակարգերում՝ ոլորտներում, որոնց հատման կետում էլ գոյություն ունի փոխաբերությունը:

Ջ. Լակոֆի տեսությունը հիմք ընդունելով՝ մենք փոխաբերությունը ընկալում ենք որպես նոր գիտելիք, որը ստացվել է ծանոթ ոլորտի հասկացությունների հատկանիշները պակաս ծանոթ (հայտնի) ոլորտի վրա պրոյեկտելու արդյունքում[6]:

Մարդակենտրոն պարադիգմի համաձայն, որը նշանակալից ազդեցություն է ունեցել հումանիտար գիտությունների միջգիտակարգային-ներառական միտումների ձևավորման վրա, փոխաբերությունը հանդես է գալիս որպես իրականության նկարագրության և

[5] **Жуйкова О.**, *Артефактные метафоры как вербальные средства объективации концепта «язык» в философском дискурсе В. фон Гумбольдта*. - Вестник Кемеровского государственного университета, N:3, 2018: researchgate.net/publication/328608665_Artifact_Metaphors_as_Verbal_Means_of_Objectivization_of _the_Concept_Language_in_the_Philosophical_Discourse_of_W_von_Humboldt (ներբեռնման օր՝ 17.02.2026):

[6] Նույն տեղում:

մշակութային կոդավորման միջոց՝ նպաստելով լեզվի և մշակույթի փոխհարաբերությունների ավելի խոր իմաստավորմանը[7]:

Ժամանակակից լեզվաբանության մեջ փոխաբերությունը դիտարկվում է ոչ միայն որպես խոսքի պատկերավորման միջոց, այլ նաև որպես մտածողության կարևոր մեխանիզմ: Փոխաբերության միջոցով մարդն իմաստավորում է շրջապատող աշխարհը՝ մի օբյեկտի հատկությունները փոխադրելով մյուսին[8]:

«Բնության» իմաստային ոլորտների փոխաբերացումը կարող է վերաբերել լեզվամշակութային երեք խոշոր իմաստաբանական խըմբերի՝ բուսական, կենդանական և «ինքնին բնական», որն ընդգրկում է «անկենդան բնությունը»[9]:

Բուսանունների փոխաբերացմամբ նկարագրվում և բնութագրվում են մարդիկ՝ բույսերի և մարդկանց հատկանիշների նմանության զուգադրական կապերի հիմքի վրա, ինչն էլ ձևավորում է փոխաբերացման հիմքը: Բուսանուն-փոխաբերությունները մշակույթի բուսական կոդի միջոցով իրականության դասակարգման միջոցներից են: Ըստ էության՝ դրանք մարդակենտրոն ու գնահատողական են[10]:

---

[7] **Сюй Лиюнь**, *Когнитивная фитономическая метафора как средство описания внешности человека в русской и китайской лингвокультурах*. - Вестник Северного (Арктического) федерального университета. Серия «Гуманитарные и социальные науки», т. 24, N:2, 2024, c.93-101, journal.narfu.ru/index.php/ gum/article/view/ 1863/1151 (ներբեռնման օր՝ 11.02.2026):

[8] **Юлдашева Ш.**, *Значение фитонимов в образовании метафор в русском языке*. - European Science international conferance: Modern Problems in Education and Their Scientific Solutions, esiconf. org/index. php/ MRIATS/article/view/7392/7379 (Ներբեռնման օր՝ 29.04.2026):

[9] **Юрков Е.**, *Метафора лингвокультурного кода «растения» в аспекте лингвокультурология*. - Вестник ВГУ. Серия: Филология. Журналистика, N:1, 2012, vestnik.vsu.ru/pdf/phylolog/2012/01/2010-01-36.pdf (ներբեռնման օր՝ 12.02.2026):

[10] **Сюй Лиюнь**, *Когнитивная фитономическая метафора как средство описания внешности человека в русской и китайской лингвокультурах*. - Вестник Северного (Арктического) федерального университета. Серия «Гуманитарные и социальные науки», т. 24,

Փոխաբերական իմաստի, բազմիմաստության ձևավորման վրա ազդում են մի շարք գործոններ.

1. *Բույսերի հաճախակի հանդիպելը և մշակութային նշանակությունը:* Ինչքան հաճախ է տվյալ բույսը հանդիպում, այնքան մեծ է հավանականությունը, որ այն տարբեր իմաստներով գործածվի:

2. *Իմացական սխեման՝ «մարդ-բույս»*: Բույսերը վաղուց ծառայում են մարդուն բնութագրելուն՝ ելնելով բույսի որոշակի հատկանիշներից՝ արտաքին տեսք (բարձրություն, գույն, ձև), կիրառությունը (փայտանյութի ամրությունը, պտուղների գունավորությունը), վարքագծային կամ գնահատողական հատկանիշներ (փխրունություն, դատարկություն, անպիտանություն):

3. *Արեալային և հասարական-լեզվաբանական հատկություններ:* Տարբեր շրջաններ կարող են դրսևորել բուսանունների փոխաբերացման տարբեր աստիճաններ[11]:

Այսպես, օրինակ, լեզուների մեծ մասում ծաղիկների անունները կանացի հմայքի և գեղեցկության փոխաբերացմանն են ծառայում, իսկ հզոր ծառերը՝ տղամարդկանց:

Արդի հայերենում և անգլերենում փոխաբերացված բուսանունների իմաստային դաշտերը

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի տվյալներով՝ հայերենում փոխաբերացված բուսանունները հետևյալներն են՝ *բալ, բամբակ, բարդի, բողբոջ, դափնի, դդում, դրախտավարդ, ժուռ, լուսածաղիկ, ծաղիկ, ծառ, կաղնի, կարկաժ, կոկոն, նռի,*

N:2, 2024, c. 93-101, journal.narfu.ru/index.php/gum/article/view/ 1863/1151 (ներբեռնման օր՝ 11.02.2026):

[11] **Хань Юехао**, *Особенности фитонимической метафоры и метонимии в русской языковой картине мира (в сопоставлении с китайской)*, msu.am/wp-content/uploads/2025/12/301-314_Хань_Ю._Альманах_XIX.pdf.pdf (ներբեռնման օր՝ 23.04.2026):

շուշան, չինարի, սոսի, վարդ, տանձ, ցախ, կանաչ, կոճղ, ծիլ, ընձյուղ, արմատ, սերմ, պտուղ, փուշ, թավուտ, հյութ, բալզամ, մոլախոտ, շամամ:

Ա. Սարգսյանի Ղարաբաղի բարբառի բառարանը ավելացնում է ևս մի քանի բուսանուններ, որոնք չեն փոխաբերացվել կամ բացակայում են արդի հայերենում: Դրանք են՝ *ցüք, շիմշüտ, տüնդö(նը), խըյար, բուբուլ, շրմալ, քընթը՝ռ, չօփ, մուխ(ը)ր(ը)տüնձի, խընձör, ծէթ, պիխկաթէր, տըրաքած շրմբալութ*:

Անգլերենի բացատրական բառարանները (Oxford[12], Cambridge[13], Merriam-Webster[14], Collins[15]) ներկայացնում են փոխաբերացված բուսանունների հետևյալ պատկերը. *rose* (վարդ), *lily* (շուշան), *violet* (մանուշակ), *daisy* (երիցուկ), *pansy* (թավշածաղիկ), *wallflower* (շահպրակ), *sunflower* (արևածաղիկ), *oak* (կաղնի), *willow* (ուռենի), *reed* (եղեգ), *ivy* (բաղեղ), *laurel* (դափնի), *thorn* (փուշ), *root* (արմատ), *fruit* (պտուղ), *seed* (սերմ), *sprout* (ծիլ), *shoot* (ընձյուղ), *blossom* (ծաղկաբույլ), *bloom* (ծաղկում), *bud* (բողբոջ), *weed* (մոլախոտ), *balm* (բալասան), *sap* (հյութ), *branch* (ճյուղ), *tree* (ծառ), *leaf* (տերև), *flower* (ծաղիկ), *green* (կանաչ), *apple* (խնձոր), *peach* (դեղձ), *cherry* (բալ), *lemon* (կիտրոն), *nut* (ընկույզ), *bean* (լոբի), *turnip* (շաղգամ), *pumpkin* (դդում), *pear* (տանձ), *thicket* (թավուտ), *jungle* (մացառուտ), *woodland* (ծառաստան), *juice* (հյութ), *crabapple* (վայրի խնձոր), *sour grape* (թթու խաղող), *offshoot* (ճյուղ), *sapling* (տնկի):

---

[12] *Oxford English Dictionary* 2000, https://www.oed.com (ներբեռնման օր՝ 01.06.2026):

[13] *Cambridge English Dictionary*, 1999, https://dictionary.cambridge.org (ներբեռնման օր՝ 29.05.2026):

[14] *Merriam-Webster* 1996, Merriam-Webster, Inc. Retrieved from https://www.merriam-webster.com (ներբեռնման օր՝ 02.06.2026):

[15] *Collins English Dictionary*, 2000, https://www.collinsdictionary.com (ներբեռնման օր՝ 03.06.2026):

Ըստ Յուրկովի դասակարգման՝ բույսերի աշխարհը պայմանականորեն բաժանված է 10 կատեգորիաների, որոնցից յուրաքանչյուրի միավորները վերաբերում են փոխաբերացման այս կամ այն ուղղությանը (—› մարդ—› վերացական հասկացություն—› առարկա—› ֆիզիկական երևույթ—› հասարակական երևույթ—› հոգեբանական երևույթ)։

Ըստ այս սկզբունքի՝ հայերենում փոխաբերացված բուսանունները դրսևորում են հետևյալ պատկերը.

1. Ընդհանուր անվանումներ՝ *ծաղիկ, ծառ, ցախ, կանաչ*։

2. Ծառեր և թփեր՝ *բամբակ, բարդի, դափնի, կաղնի, նոճի, չինարի։*

3. Խոտաբույսեր, ծաղիկներ (դեկորատիվ և ոչ դեկորատիվ)՝ *դրախտավարդ, լուսածաղիկ, շուշան, վարդ, մոլախոտ։*

4. Բանջարեղեն՝ *դդում, կարկաժ, շամամ։*

5. Սնկեր՝ չկան։

6. Ցածրակարգ բույսեր՝ չկան։

7. Բույսի մասեր՝ *բողբոջ, կոկոն, ծիլ, ընձյուղ, արմատ, կոճղ, պտուղ, սերմ, փուշ*։

8. Մրգեր, հատապտուղներ՝ *բալ, տանձ*։

9. Բույսերի ամբողջություն՝ *թավուտ*։

10. Բույսի մեջ պարունակվող նյութ՝ *հյութ, բալզամ, ժուռ*։

Ինչպես երևում է, հայ ժողովրդի լեզվամշակույթում սնկերն ու ցածրակարգ բույսերը, պայմանավորված արեալային ու կիրառության առանձնահատկություններով, փոխաբերացման չեն ենթարկվել։ Խիստ սահմանափակ են նաև մրգերն ու բանջարեղենը, բույսերի ամբողջությունը։ Փոխաբերացման առավել մեծ հնարավորություններ են դրսևորում բույսերի ընդհանուր անվանումները, ծառերն ու թփերը, խոտաբույսերը, բույսի մասերը։

Մի շարք բուսանուններ, որոնք փոխաբերացված չեն ժամանակակից գրական հայերենում, Արցախի բարբառում դրսևորում են փոխաբերական կիրառություն: Դրանք են.

1. Ընդհանուր անվանում՝ *ցա՛ք*:
2. Ծառեր և թփեր՝ *շիմշա՛տ, մուխ(ը)ր(ը)տա՛նձի:*
3. Խոտաբույս՝ *տա՛նդ(ը)ռ(նը)*:
4. Բանջարեղեն՝ *խըյար, բուբուլ*:
5. Սնկեր՝ չկան:
6. Ցածրակարգ բույսեր՝ չկան:
7. Բույսի մասեր՝ *շըմալ, քընթըէռ, չօփ, պիխկաթէր:*
8. Մրգեր, հատապտուղներ՝ *խընձո՛ր, տըրաքած շըմբալութ:*
9. Բույսերի ամբողջություն՝ չկա:
10. Բույսի մեջ պարունակվող նյութ՝ *ծէթ:*

Ինչպես նկատվում է, սնկերը, ցածրակարգ բույսերը Արցախի բարբառում ևս ակտիվություն չեն ցուցաբերում:

Եթե Յուրկովի դասակարգման սկզբունքը կիրառենք անգլերենի փոխաբերացված բուսանունների նկատմամբ, ապա կստանանք հետևյալ պատկերը.

1. Ընդհանուր անվանումներ՝ *flower, tree, green:*
2. Ծառեր և թփեր՝ *oak, willow, ivy, laurel, reed*:
3. Խոտաբույսեր, ծաղիկներ (դեկորատիվ և ոչ դեկորատիվ)՝ *rose, lily, violet, daisy, pansy, wallflower, sunflower, blossom, bloom:*
4. Բանջարեղեն ՝*turnip, pumpkin:*
5. Սնկեր՝ չկան:
6. Ցածրակարգ բույսեր՝ չկան:
7. Բույսի մասեր՝ *root, seed, bud, shoot, sprout, thorn, branch, leaf:*
8. Մրգեր, հատապտուղներ՝ *apple, peach, pear, cherry, lemon:*

9. Բույսերի ամբողջություն՝ *thicket, jungle, woodland* (ավելի սահմանափակ փոխաբերական կիրառությամբ):

10. Բույսի մեջ պարունակվող նյութ՝ *sap, balm, juice*:

Փոխաբերացված բուսանունների դասակարգումը

Ըստ իմաստային ընդգրկման՝ փոխաբերացված բուսանունները կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

1. ***Մարդաբանական փոխաբերություններ***. կիրառվում են արտաքինի և բնավորության նկարագրության համար:

Դրանք են.

1. *Բալ* - փխբ. փոքրիկ և կարմիր[16]: 2. *Բամբակ* - փխբ. փափուկ (ԺՀԼԲ, հ. 1, 276): Արցախի բարբառում ունի նաև «հնազանդ, մեղմաբարո» նշանակությունը[17]: 3. *Բարդի* - փխբ. բարձրահասակ (ԺՀԼԲ, հ. 1, 277): 4. *Դրախտավարդ* - փխբ. դրախտային վարդի նմանվող, չքնաղ, բարգավաճ, հիանալի (ԺՀԼԲ, հ. 1, 529): 5. *Ժուռ*- 1. փխբ. մռայլ, թթված: 2. փխբ. տհաս, համբակ (ԺՀԼԲ, հ. 2, 294): 6. *Լուսածաղիկ* - փխբ. չքնաղ, գեղեցիկ (ԺՀԼԲ, հ. 2, 444): 7. *Ծառ* - փխբ. բարձրահասակ տղա, մարդ (ԺՀԼԲ, հ. 2, 650): 8. *Կաղնի* - փխբ. դիմացկուն, ջլապինդ, հաղթանդամ (մարդ) (ԺՀԼԲ, հ. 3, 23): 9. *Կարկաժ* - փխբ. գլուխ, կառափ (ԺՀԼԲ, հ. 3, 79; ՂԲԲ, 336): 10. *Նռճի* - փխբ. դալար, բարձրահասակ, սեգ (ԺՀԼԲ, հ. 4, 41): 11. *Շուշան* - սպիտակ (ԺՀԼԲ, հ. 4, 92): 12.*Չինարի*- փխբ. բարձր ու ճկուն հասակով, նրբակազմ, վայելչակազմ, նրբիրան (ԺՀԼԲ, հ. 4, 137): 13. *Սոսի* - փխբ. բարձր, սլացիկ (ԺՀԼԲ, հ. 4, 318): 14. *Վարդ* - 1.փխբ. որևէ բանի ամենալավ՝ ամենա-

---

[16] *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, Ե., հ. 1-4, 1969-1980, էջ 270: *Այսուհետև այս բառարանից բերվող բառերի բացատրությունների մոտ փակագծերում տրվելու է ԺՀԼԲ, հատորը և էջը:

[17] **Սարգսյան Ա.**, *Ղարաբաղի բարբառի բառարան*, Ե., 2013, էջ 611: *Այսուհետև այս բառարանից բերվող բառերի բացատրությունների մոտ փակագծերում տրվելու է ՂԲԲ և էջը:

գեղեցիկ կողմը, 2. վարդի նմանություն ունեցող, շատ գեղեցիկ, սիրուն (ԺՀԼԲ, հ.4, 375)։ 15. *Յախ* - փխբ. կոշտ ու ցից-ցից տնկված (ԺՀԼԲ, հ. 4, 534)։ 16. *Թավուտ* - փխբ. մազոտ, բրդոտ (ԺՀԼԲ, հ. 2, 148)։ 17. *Շամամ* - փխբ. փոքր՝ բոլորշի (ստինք)(ԺՀԼԲ, հ. 4, 460)։ 18. *Տանձ* - փխբ. բթամիտ՝ ապուշ մարդ (ԺՀԼԲ, հ. 4, 443)։

Արցախի բարբառում իմաստային այս շարքում են նաև հետևյալ բուսանունները. 1. *Բուբուլ* - փխբ. կարճահասակ (ՂԲԲ, 96)։ 2. *Խընձօր* - 1.փխբ. կարմիր թուշ՝ այտ, 2. փխբ. ազդրոսկրի վերին կլոր ծայրը (ՂԲԲ, 278)։ 3. *Շրմալ* - փխբ. նուրբ ու բարձրահասակ (ՂԲԲ, 571)։ 4. *Շիմշատ* - փխբ. սլացիկ ու ճկուն հասակ ունեցող (մարդ) (ՂԲԲ, 571)։ 5. *Չօփ* - փխբ. նիհար մարդ (բանավոր խոսքից), 6. *Մուխ(ը)ր(ը)տնի* - փխբ. ժուժկալ՝ սակավապետ՝ քչով բավարարվող մարդ (ՂԲԲ, 526), 7. *Պիխկաթէր* - փխբ. թեթևսոլիկ մարդ (ՂԲԲ, 633)։

Անգլերենում այս կարգի փոխաբերացված բուսանունները դրսևորում են հետևյալ պատկերը.

1. *Rose* – փխբ. շատ գեղեցիկ, հմայիչ կին կամ աղջիկ, գեղեցկության խորհրդանիշ։ 2. *Lily* – փխբ.մաքուր, անմեղ, անբասիր մարդ։ 3. *Violet* – փխբ. համեստ, ամաչկոտ, ինքնամփոփ մարդ։ 4. *Daisy* – փոխ.հաճելի, գրավիչ, կենսուրախ մարդ։ 5. *Peach* – փխբ. շատ հաճելի, համակրելի կամ գրավիչ մարդ։ 6. *Cherry* – փխբ. երիտասարդ, թարմ տեսք ունեցող մարդ, երբեմն՝ առողջ ու կարմրաթուշ։ 7. *Willow* – փխբ. սլացիկ, նազելի կազմվածքով մարդ, հատկապես կին։ 8. *Reed* – փխբ. նիհար, բարձրահասակ, բարակ կազմվածքով մարդ։ 9. *Oak* – փխբ. ուժեղ, տոկուն, ամուր բնավորությամբ մարդ։ 10. *Pansy* – փխբ. թույլ, անվճռական կամ չափազանց նուրբ տղամարդ (հաճախ նվաստացուցիչ երանգով)։ 11. *Wallflower* – փխբ. ամաչկոտ, հասարակական միջոցառումներում չնկատվող մարդ։ 12. *Turnip* – փխբ. հիմար,

դանդաղամիտ մարդ: 13. *Pumpkin* – փխբ. սիրալիր դիմելաձև՝ փոքրիկի կամ սիրելի մարդու նկատմամբ: 14. *Nut* – փխբ. տարօրինակ, խենթ մարդ: 15. *Bean* – փխբ. մարդ, անհատ (հիմնականում խոսակցական արտահայտություններում՝ *old bean, silly bean*): 16. *Apple* – փխբ. սիրելի, թանկագին մարդ: 17. *Sunflower* – փխբ. կենսուրախ, «արևոտ» բնավորությամբ մարդ: 18. *Flower* – փխբ. որևէ խմբի լավագույն ներկայացուցիչ, երիտասարդության կամ գեղեցկության մարմնացում:

Ինչպես տեսնում ենք, բուսանունների մեծ մասը հայերենում և անգլերենում համիմաստ փոխաբերացման է ենթարկվել, սակայն կան նաև տարբերություններ, օրինակ, եթե հայերենում *դդումը* «հիմար, բթամիտ» իմաստն ունի, ապա անգլերենում այն կիրառվում է որպես սիրալիր դիմելաձև փոքրիկի կամ սիրելի մարդու նկատմամբ, իսկ «բթամիտ» իմաստն արտահայտում է *շաղգամ* բուսանունը:

2. *Հուզական-գնահատողական փոխաբերություններ*, որոնք փոխանցում են խոսողի վերաբերմունքը: Այս կարգի բուսանունները շատ չեն. 1. *Դդում* - փխբ. բութ, դատարկագլուխ, անհասկացող (մարդ) (ԺՀԼԲ, հ. 1, 487): 2. *Կանաչ* - 1.փխբ. չհասած, խակ: 2. փխբ. հասուն չդարձած, արբունքի չհասած, մանուկ, մատաղահաս (ԺՀԼԲ, հ.3, 35): 3. *Բալգամ* - փխբ. սփոփանք, մխիթարություն (ԺՀԼԲ, հ. 1, 271): 4. *Սերմ* - փխբ. հետզհետե զարգացող ու ուժեղացող սկզբնական մտածմունք կամ ունակություն (ԺՀԼԲ, հ.4, 294):

Արցախի բարբառում այս շարքը լրացվում է ևս մի քանի բուսանունով.1. *Խըյար* - փխբ. արժանապատվությունից զուրկ՝ ապիկար մարդ (ՂԲԲ, 276): 2. *Տանձօռ(նը)* - փխբ. նուրբ, փափուկ (բան) (ՂԲԲ, 709): 3. *Քընթըէռ(նը)* - փխբ. անճարակ մարդ (ՂԲԲ, 798): 4. *Տըրաքած շըմբալութ* - փխբ. մեկից՝ մի բանից նեղացած՝ վիրավորված (ՂԲԲ, 732):

Անգլերենում հետևյալն ենք տեսնում.

1. *Lemon* – փխբ. անորակ, անպետք կամ հիասթափեցնող բան: 2. *Weed* – փխբ. անցանկալի, վնասակար մարդ: 3. *Balm* – փխբ. մխիթարություն, սփոփանք, հոգեկան հանգստություն: 4. *Green* – փխբ. անփորձ, խակ, չհասունացած: 5. *Sour grape(s)* – փխբ. անհաջողություններից հետո ցուցաբերվող արհամարհանք կամ նախանձ: 6. *Crabapple* – փխբ. դժգոհ, դյուրագրգիռ մարդ:

3. *Հասարակական փոխաբերություններ*, որոնք արտացոլում են հասարակական դերը: Դրանք են.

1. *Բողբոջ* - փխբ. սերունդ, շառավիղ (ԺՀԼԲ, հ. 1, 336): 2. *Դափնի* - փխբ.փառք, պատիվ, հաղթանակ, հաջողություն (ԺՀԼԲ, հ. 1, 487): 3. *Ընձյուղ* - փխբ. շառավիղ, սերունդ (ԺՀԼԲ, հ. 2, 112): 4. *Արմատ* - փխբ. ցեղ, զարմ, ազգուտակ (ԺՀԼԲ, հ. 2, 231): 5. *Պտուղ* - 1. փխբ. ծնունդ, զավակ: 2. փխբ. երախայրիք՝ ընծա՝ իբրև առաջին վաստակ (ԺՀԼԲ, հ. 4, 220): 6. *Հյութ* - 1. փխբ. բարոյական ազդակ, հոգեկան սնունդ, 2. փխբ. Էություն, ուղնուծուծը (ԺՀԼԲ, հ. 3, 356): 7. *Մոլախոտ* - փխբ. հասարակության համար վնասակար մարդ (ԺՀԼԲ, հ. 3, 553), 8. *Կռճղ* - փխբ. ընտանիքի ավագագույն և հարգելի անդամը, որը դիտվում է իբրև ընտանիքի ամբողջականության և բարօրության խորհրդանշան (ԺՀԼԲ, հ. 3, 173):

Արցախի բարբառն այս կարգը համալրում է մեկ բառով. *Ծէթ* - փխբ. խելք (ՂԲԲ, 299):

Անգլերենում ունենք հետևյալը.

1. *Laurel* – փխբ. փառք, պատիվ, հաջողություն, ձեռքբերում: 2. *Root* – փխբ. ծագում, նախահայրական հիմք, տոհմական կապ: 3. *Branch* – փխբ. ընտանիքի, կազմակերպության կամ ժողովրդի ճյուղ: 4. *Seed* – փխբ. սերունդ, սկզբնաղբյուր, ապագա զարգացման հիմք: 5. *Shoot* – փխբ. նոր սերունդ, երիտասարդ ներկայացուցիչ:

6. *Fruit* – փխբ. աշխատանքի, գործունեության կամ ջանքերի արդյունք: 7. *Offshoot* – փխբ. ճյուղավորում, սերունդ, նոր առաջացած խումբ: 8. *Sapling* – փխբ. երիտասարդ, դեռևս չհասունացած անդամ կամ ներկայացուցիչ:

4. ***Ընդհանուր փոխաբերություններ***, որոնք բազմակի փոխաբերացման են ենթարկվել և իմաստային տարբեր ընդգրկումներ ունեն: Դրանք են.

1. *Ծաղիկ* - 1. փխբ. երեխա, պատանի, նորահաս աղջիկ, տղա, 2. փխբ. նորապսակներից յուրաքանչյուրը, 3. փխբ. իր շրջապատի մեջ լավագույն անձը (գեղեցկությամբ, խելքով, շնորհքով ևն), կամ բոլորի լավագույն մասը, ընկեր, 4. փխբ. որևէ բանի (երևույթի, ներկայացման և այլն) լավագույն մասը, 5.փխբ. երջանկություն, հաճույք, սեր, 6. փխբ. հույս, երազանք, 7. փխբ. երիտասարդություն, ջահելություն, 8. փխբ. գեղեցիկ, չքնաղագեղ, ծաղկանման, 9. փխբ. պատանեկան, երիտասարդական, պատանի, նորահաս: 10. փխբ. որևէ բանի արգասիք՝ արդյունք՝ պտուղ (ԺՀԼԲ, հ. 2, 617): 2. *Ծիլ* - 1. փխբ. նոր սերունդ, մատաղ սերունդ, 2. փխբ. (արևմտհ.) մանկապարտեզի 1-ին դասարան, 3. փխբ. զավակ (ԺՀԼԲ, հ. 2, 668): 3. *Փուշ* - 1. փխբ. հոգեկան ցավ՝ վիշտ՝ տառապանք, 2. փխբ. դառնություններով՝ տառապանքներով՝ նեղություններով լի, 3. փխբ. խղճի խայթ, 4. փխբ. ասվում է խիստ՝ մռայլ՝ չար մարդու մասին (ԺՀԼԲ, հ. 4, 691): 4. *Խակ* - 1. փխբ. անչափահաս, տհաս, 2. փխբ. մտավորապես չզարգացած, տհաս, թերուս, ոչ հմուտ: 3. փխբ. լավ չմտածված, անլուրջ, 4. փխբ. անմտածված կերպով, ոչ խոհականորեն (ԺՀԼԲ, հ. 2, 465):

Արցախի բարբառի բառարանում բուսանունների այս խմբին պատկանող փոխաբերացումներ չեն հանդիպում:

Անգլերենում այս շարքը ներկայացնում են հետևյալ բուսանունները.

1. *Flower* – 1. փխբ.երիտասարդության խորհրդանիշ, 2. փխբ. լավագույն ներկայացուցիչ, 3. փխբ. հասարակության կամ խմբի լավագույն մասը, 4. փխբ. գեղեցկության մարմնացում, 5. փխբ. ծաղկման, զարգացման շրջան, 6. փխբ. որևէ երևույթի բարձրակետ: 2. *Blossom / Bloom* – 1. փխբ. ծաղկում, զարգացում, 2. փխբ. երիտասարդության և գեղեցկության շրջան, 3. փխբ. հաջողության հասնել, 4. փխբ. լիարժեք բացահայտվել որպես անձ: 3. *Bud* – 1. փխբ. երիտասարդ, դեռևս զարգացող անձ, 2. փխբ. ապագա տաղանդ, 3. փխբ. սկիզբ, նախանշան, 4. *Sprout* – 1. փխբ. նոր սերունդ, 2. փխբ. նոր գաղափարի կամ շարժման սկիզբ, 3. փխբ. նոր երևույթի առաջացում: 5. *Thorn* – 1. փխբ. տհաճություն, ցավի պատճառ, 2. փխբ. մշտական անհանգստություն, 3. փխբ. դժվարություն կամ խոչընդոտ, 4. փխբ. անձ, որը խնդիրներ է ստեղծում ուրիշների համար: 6. *Fruit* – 1. փխբ. արդյունք, ձեռքբերում, 2. փխբ. զավակ, սերունդ (հին կամ կրոնական գործածություն), 3. փխբ. աշխատանքի պտուղ: 7. *Seed* – 1. փխբ. սկիզբ, նախադրյալ, 2. փխբ. ապագա զարգացման հիմք: 3. փխբ. ժառանգական հատկության կրող: 8. *Root* – 1. փխբ. ծագում, ակունք, 2. փխբ. հիմք, պատճառ, 3. փխբ. էություն, խորքային բնույթ: 9. *Green* – 1. փխբ. անփորձ, 2. փխբ. երիտասարդ, 3. փխբ. չհասունացած, 4. փխբ. թարմ, նոր:

Միակ բուսանունը, որի փոխաբերացումը տվել է հույզեր արտահայտող բացականչություն, *զկէո* բուսանունն է, որը նշանակում է «արհամարհական պատասխան, չոռ, զահրումար» (ԺՀԼԲ, հ.2, 88), իսկ սրանից առաջացած *զկէոաջուր* բառը փոխաբերաբար նշանակում է «թթու, անպետք գինի» (ԺՀԼԲ, հ. 2, 38):

Արցախի բարբառում *սխտոր* բուսանունը փոխաբերացման չի ենթարկվել, բայց սրանից ածանցված *սրխտօրհ* բայը փոխաբերացվել է «խիստ նախատել» իմաստով (ՂԲԲ, 666):

Եզրակացություն

Այսպիսով, եթե ընդհանրացնենք փոխաբերացված բուսանունների կիրառական առանձնահատկությունները արդի գրական հայերենում, Արցախի բարբառում և անգլերենում, կհանգենք հետևյալին.

1. Փոխաբերացման ենթարկվել են այն բուսանունները, որոնք հատուկ են աշխարհագրական տվյալ տարածքին և լայնորեն կիրառվում են ժողովրդի կողմից:

2.Հայերենում փոխաբերացված բուսանունների մեծ մասը վերաբերում է մարդու արտաքինին և ֆիզիկական նկարագրությանը: Անգլերենում գերակշռում են զարգացման, ծագման, սոցիալական հարաբերությունների և հոգեբանական գնահատականի հետ կապված փոխաբերությունները:

3. Եթե հայերենում առավել զարգացած է «մարդ = բույս» արտաքին նմանության մոդելը, ապա անգլերենում ավելի զարգացած է «կյանք/հասարակություն = բույսի աճ» փոխաբերական մոդելը:

4. Մի շարք բուսանուններ, որոնք փոխաբերացված չեն գրական հայերենում, այդ հատկանիշը դրսևորում են Արցախի բարբառում. դա մեկ անգամ ևս հաստատում է բարբառների կենսական աղբյուր լինելը գրական լեզվի համար:

5. Բուսանունների մեծ մասի փոխաբերացումն իմաստային համաբանություն է դրսևորում հայերենում և անգլերենում, սակայն կան նաև տարբերություններ:

6. Եթե գրական հայերենում բուսանունները փոխաբերացվում են բառային մակարդակում, ապա Արցախի բարբառում և անգլերենում որոշ բուսանուններ փոխաբերացման են ենթարկվում բառակապակցական մակարդակում:

7. Քանակային առումով գրական հայերենում փոխաբերացվել է 34 բուսանուն, որոնց ավելանում է ևս 13 բուսանուն Արցախի բար-

բառում (ընդհանուր 47 բուսանուն), իսկ անգլերենում այդ թիվը հասնում է 46-ի:

Օգտագործված գրականություն

Աստուածաշունչ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, 1994, Գիրք Ծննդոց 1։
qahana.am/bible/OldTestament/Genesis.html (ներբեռնման օր՝ 10.06.2026):
Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1-4, Ե., 1969-1980:
Ղանալանյան Ա., Հայկական առածանի, Ե., 1951:
Սարգսյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., 2013:
Богус З., **Ягумова Н.**, Метафоризация наименований флоры и фауны в разносистемных языках. - Вестник АГУ, Выпуск 4 (227), 2018, cyberleninka.ru /article/n/ metaforizatsiya-flory-i-fauny-v-raznosistemnyh-yazykah/viewer (ներբեռնման օր՝ 12.02.2026):
Дин Лин, Фитонимы-названия древесных растений в русских и китайских фразеологизмах с религиозным компонентом (лингвокультурологический аспект). - Мир науки. Социология, филология, культурология, том 14, N:4, 2023, skf_mn.ru/PDF/18FLSK423.pdf (Ներբեռնման օր՝ 10.02.2026):
Жуйкова О., Артефактные метафоры как вербальные средства объективации концепта «язык» в философском дискурсе В. фон Гумбольдта. - Вестник Кемеровского государственного университета, N:3, 2018, researchgate.net/publication/328608665_ Artifact_ Metaphors_as_Verbal_Means_of_Objectivization_of_the_Concept_Language_in_the_Philosophical_ Discourse_of_W_von_Humboldt (ներբեռնման օր՝ 17.02.2026):

Сюй Лиюнь, *Когнитивная фитономическая метафора как средство описания внешности человека в русской и китайской лингвокультурах*. - Вестник Северного (Арктического) федерального университета. Серия «Гуманитарные и социальные науки», т. 24, N:2, 2024, с.93-101 journal.narfu.ru/index.php/gum/article/view/1863/1151 (Ներբեռնման օր՝ 11.02.2026):

Хань Юехао, Особенности фитонимической метафоры и метонимии в русской языковой картине мира (в сопоставлении с китайской), msu.am/wp-content/uploads/2025/12/
301-314_Хань_Ю._Альманах_XIX.pdf.pdf (ներբեռնման օր՝ 23.04.2026):

Юлдашева Ш., Значение фитонимов в образовании метафор в русском языке. - European Science international conferance: Modern Problems in Education and Their Scientific Solutions,
esiconf.org/index.php/MRIATS/article/view/7392/7379 (ներբեռնման օր՝ 29.04. 2026):

Юрков Е., Метафора лингвокультурного кода «растения» в аспекте лингвокультурология. - Вестник ВГУ. Серия: Филология. Журналистика, N:1, 2012, vestnik.vsu.ru/pdf /phylolog/2012 /01/2010-01-36.pdf (ներբեռնման օր՝ 12.02.2026):

Cambridge English Dictionary, Cambridge University Press, 1999. Retrieved from https://dictionary.cambridge.org (ներբեռնման օր՝ 29.05.2026):

Collins English Dictionary, Harper Collins Publishers, 2000. Retrieved fromhttps://www. collinsdictionary.com (ներբեռնման օր՝ 03.06.2026):

Merriam-Webster 1996, Merriam-Webster, https://www.merriam-webster.com (ներբեռնման օր՝ 02.06.2026):

Oxford English Dictionary, Oxford University Press, 2000, https://www.oed.com (ներբեռնման օր՝ 01.06.2026):

Santryan Liana, **Tovmasyan Lusine - Anthropomorphic Metaphorization in Phytonyms of Modern Literary Armenian (In Comparison with the Artsakh Dialect and English)**. - In the modern era of the formation of a new world order, linguocultural studies gain fresh importance. In creating the linguistic picture of the world, a nation's vital activity is best manifested through vocabulary usage, with phytonyms (plant names) being an inseparable part of it.Through the metaphorization of phytonyms, people are described and characterized based on comparative links between the shared characteristics of plants and humans.

Using descriptive and comparative methods, the semantic scopes of metaphorized phytonyms in modern literary Armenian, the Artsakh dialect, and English are presented and classified according to accepted categories. Metaphorized phytonyms are distributed into 10 categories: general names, trees and shrubs, herbs and flowers, vegetables, fungi, lower plants, plant parts, fruits and berries, plant clusters, and substances contained within plants.

According to semantic scope, anthropomorphic, emotional-evaluative, social, and general metaphors are distinguished. Quantitatively, the number of metaphorized phytonyms in modern Armenian is 34, plus another 13 phytonyms in the Artsakh dialect (47 in total), and 46 in English.

Keywords: phytonym, metaphor, anthropomorphic metaphor, comparative study, metaphorized phytonym, semantical field, linguaculture.

Santryan Liana, PhD in Philology, Associate Professor, Lecturer at Armenian National Agrarian University.
Tovmasyan Lusine, PhD in Philology, Associate Professor, Lecturer at Russian-Armenian University.

Сантрян Лиана, **Товмасян Лусине - Антропоморфная метафоризация в фитонимах современного литературного армянского языка (в сравнении с арцахским диалектом и английским языком)**. - В со-

временную эпоху формирования нового мирового порядка лингвокультурные исследования приобретают новую актуальность. В создании языковой картины мира жизнедеятельность народа лучше всего проявляется в словоупотреблении, неотъемлемой частью которого являются фитонимы (названия растений). Посредством метафоризации фитонимов описываются и характеризуются люди на основе сопоставительных связей между сходными признаками растений и человека.

С помощью описательного и сравнительного методов представлены семантические объёмы метафоризированных фитонимов в современном литературном армянском языке, арцахском диалекте и английском языке, а также проведена их классификация по принятым категориям. Метафоризированные фитонимы распределены по 10 категориям: общие названия, деревья и кустарники, травы и цветы, овощи, грибы, низшие растения, части растений, фрукты и ягоды, совокупности растений, содержащиеся в растениях вещества. По семантическому объёму различаются антропоморфные, эмоционально-оценочные, социальные и общие метафоры. В количественном отношении число метафоризированных фитонимов в современном армянском языке составляет 34, плюс еще 13 фитонимов в арцахском диалекте (всего 47), а в английском языке - 46.

Ключевые слова: фитоним, метафора, антропоморфная метафора, сравнительное исследование, метафоризированный фитоним, семантическое поле, лингвокультура.

Сантрян Лиана, кандидат филологических наук, доцент, преподаватель Армянского национального аграрного университета.
Товмасян Лусине, кандидат филологических наук, доцент, преподаватель Российско-армянского университета.